ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 01 » հոկտեմբերի 2020 թվականի N 12-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 16-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 1.1-ին և 4-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1000-Ն որոշման հավելված N 2-ի 19-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի օգոստոսի 29-ի N 04 որոշման հավելվածի 19-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը ***որոշում է՝***

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի

22-ի N 16-Լ որոշմամբ հաստատված 2020 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն և «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին գումար հատկացնելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին:

05.10.2020

X

ԶԱՐՈՒՀԻ ԲԱԹՈՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Signed by: BATOYAN ZARUHI 7909790279 **Զ. ԲԱԹՈՅԱՆ**